ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 8

ԵՊՀ ԻՄ տնտեսագիտության ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

01.07. 2017թ.Ք. Իջևան

Նախագահ Ն. Խուդավերդյան

Քարտուղար Ա. Սարիբեկյան

Խորհրդի նիստին մասնակցում էին նախագահ Ն. Խուդավերդյանը, քարտուղար Ա. Սարիբեկյանը, Գ. Հովհաննիսյանը, Պ Ասիլբեկյանը, Գ. Ավետիսյանը, Հ. Ազիզյանը, ուս. խորհրդի նախագահ Հ. Քարտաշյանը, ՈՒԳԸ նախագահ Ս. Հակոբյանը, ուսանողներ՝ Ս. Սաֆարյանը, Ն. Մխիթարյանը, հրավիրված էր մասնաճյուղի տնօրեն Ս. Առաքելյանը և ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչները:

Ֆակուլտետի խորհրդի նախագահ Ն. Խուդավերդյանը բացելով ֆակուլտետի խորհրդի նիստը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և ներկայացրեց օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2016 - 2017 ուս. տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփման մասին:
   /Զեկ. Ն. Խուդավերդյան/
2. Ֆակուլտետի ըստ մասնագիտությունների 2017թ. ամփոփիչ ատեստավորման արդյունքների ամփոփման մասին:
   /Զեկ. Ն. Խուդավերդյան/

Ընթացիկ հարցեր;

Ֆակուլտետի խորհրդի անդամների կողմից բաց քվեարկությամբ միաձայն ընդունվեց նիստի օրակարգը:

1.Լսեցին – Ն. Խուդավերդյանին

Նա նշեց, որ 2016-2017 ուս. տարվա երկրորդ կիսամյակի (1-ից 3-րդ կուրսերի կտրվածքով) քննարշրջանի ստուգարքների և քննությունների արդյունքները ըստ ֆակուլտետում գործող կրթական ծրագրերի դեկանատի կողմից ամենայն մանրամասնությամբ վեր է լուծվել և ամփոփվել: Նա ներկայացրեց, որ քննաշրջանը ֆակուլտետում կազմակերպվել է թվով 109 /26 անվճար, 83 վճարովի/ ուսանողների համար, այդ թվում <Տնտեսագիտության տեսություն> մասնագիտության՝ 74 /15 անվճար, 59 վճարովի/ ուսանողի և <Սերվիս>

մասնագիտության 35 /11 անվճար, 24 վճարովի / ընթացակարգի պահանջներին համապատասխան:

Արդյունքում, ստուգարքներն ու քննությունները դրական են հանձնել թվով՝ 80 /51 տնտ. տես., 29 սերվիս/ ուսանող: Հետևաբար ընդհանուր առաջադիմությունը ֆակուլտետում կազմել է 73 % (83% սերվիս, 70% տնտ. տես.): Նախորդ /2015-2016/ ուս. տարվա համապատասխան կիսամյակի առաջադիմության ցուցանիշի /77%/ համեմատ նվազել է 4 %-ով , իսկ սույն ուս տարվա առաջին կիսամյակի ցուցանիշի /70%/ համեմատ աճել է 3% -ով:

Ընդ որում «Սերվիս» մասնագիտությունում նախորդ տարվա 91% դիմաց գրանցվել 83%՝ նվազել է 8%

«Տնտ. տեսություն» մասնագիտությունում (նախորդ տարվա 70 % դիմաց 70 %) մնացել է նույն մակարդակի վրա:

Ուստի կարծում եմ, որ արդյունքները ընդհանուր առմամբ կարելի է համարել բավարար:

Ստորև ներկայացված է առաջադիմությունը ըստ մասնագիտությունների և կուրսերի

«Տնտեսագիտություն»

Առաջին կուրս

Ուսանողների թիվը 20 /5 անվճար, 15 վճարովի/, քննաշրջանը դրական են հանձնել թվով 14 ուսանող, պարտք ունեն 6-ը: Հիմնական պարտքերը գրանցվել են մասնագիտական երեք առարկաներից՝

1. Մաթ անալիզ -2 առաջադիմությունը 75%
2. Վերլուծական երկր. և գծ. հանր. առաջադիմությունը 90%
3. Տնտ. տեսություն -2 առաջադիմությունը 85%

Կուրսի ընդհանուր առաջադիմությունը կազմել է 70%, համեմատած նախորդ կիսամյակի համապատասխան ցուցանիշի (78%) հետ, այն նվազել է 8%-ով:

«Տնտեսագիտության տեսություն»

Երկրորդ կուրս

Ուսանողների թիվը 25 /5 անվճար, 20 վճարովի/: Քննաշրջանը դրական են հանձնել թվով 16 ուսանող և պարտք ունեն 9-ը: Հիմնական պատքերը գրանցվել են հետևյալ հինգ առարկաներից՝

1. Ագրարային սեկտորի էկոնոմիկա առաջադիմությունը 92%
2. Համակարգչային պրակտիկում առաջադիմությունը 92%
3. Գործավարություն օտար լեզվով առաջադիմությունը 80%
4. Վիճակագրություն առաջադիմությունը 72%

5. Համաշխարհային տնտեսություն առաջադիմությունը 88%

Կուրսի ընդհանուր առաջադիմությունը կազմել է 64 %: Նախորդ կիսամյակի ցուցանիշի (56%) համեմատ աճել է 8 %-ով, իսկ նախորդ ուս. տարվա համապատասխան կիսամյակի ցուցանիշի (70%) համեմատ նվազել է 6%-ով: Գոհացուցիչ են կուրսային աշխատնքների պաշտպանության արդյունքները, ելնելով այն հանգամանքից որ «բարձր» (« լավ » և «գերազանց») գնահատականներ են ստացել ուսանողների 52% (ինչը համարում եմ բարեխղճորեն կատարված աշխատանքի արդյունք): «Գերազանց» առաջադիմություն է ցուցաբերել մեկ ուսանող:

Երրորդ կուրս

Ուսանողների թիվը 29 /5 անվճար, 24 վճարովի/: Քննաշրջանը դրական են հանձնել թվով 21 ուսանող և պարտք ունեն 8-ը: Կուրսի ընդհանուր առաջադիմությունը կազմել է 72%: Նախորդ կիսամյակի համապատասխան ցուցանիշի (62%) համեմատ, աճել է 10%-ով, իսկ նախորդ ուս. տարվա համապատասխան կիսամյակի ցուցանիշի (59%) աճել է 13%-ով: «Գերազանց» առաջադիմություն են ցուցաբերել թվով երեք ուսանողներ:

<Սերվիս>

Առաջին կուրս

Ուսանողների թիվը 14 /3 անվճար, 11 վճարովի/: Քննաշրջանը դրական են հնաձնել բոլորը և կուրսի առաջադիմությունը համապատասխանաբար կազմել է 100%, նախորդ կիսամյակի ցուցանիշի (81%) համեմատ աճել է 19 %-ով:
«Գերազանց» առաջադիմություն է ցուցաբերել մեկ ուսանող:

Երկրորդ կուրս

Ուսանողների թիվը 11 /4 անվճար, 7 վճարովի/: Քննաշրջանը դրական են հանձնել թվով 7 ուսանող և պարտք ունեն 4-ը: Հիմնական պարտքերը գրանցվել են երկու մասնագիտական առարկաներից

1. Սերվիսի աշխարհագրություն առաջադիմությունը 73%
2. Բնակչության աշխարհագրություն ժողովրդագրության հիմունքներով առաջադիմությունը 73%

Կուրսի ընդհանուր առաջադիմությունը կազմել է 63 %: Ինչը նախորդ կիսամյակի ցուցանիշի (82%) համեմատ նվազել է 19%-ով, իսկ նախորդ ուս. տարվա համապատասխան կիսամյակի ցուցանիշի (100%) համեմատ նվազել է 37%-

ով, որն այդքան էլ մտահոգիչ չէ քանզի այստեղ գործ ունենք փոքր թվերի հետ: «Գերազանց» առաջադիմություն է ցուցաբերել մեկ ուսանող:

Երրորդ կուրս

Ուսանողների թիվը 10 /4 անվճար, 6 վճարովի/: Քննաշրջանը դրական են հանձնել թվով 8 ուսանող և պարտք ունեն 2-ը: Կուրսի ընդհանուր առաջադիմությունը կազմել է 80% , որը և՛ նախորդ կիսամյակի ցուցանիշի (80%) համեմատ, և՛ նախորդ ուս. տարվա համապատասխան կիսամյակի ցուցանիշի (80%) համեմատ մնացել է անփոփոխ:

Ամփոփելով վերլուծության արդյունքները նա նշեց, որ դրական փաստ և միտում է համարում, այն, որ ֆակուլտետում անվճար համակարգում ուսումնառվող բոլոր ուսանողները ցուցաբերել են 100% առաջադիմություն: Քննաշրջանի արդյունքում 6 ուսանող ցուցաբերել է բացարձակ «գերազանց» առաջադիմություն (4 տնտ. տես., 2 սերվիս): Քննական գործընթացները չեն բողոքարկվել որևէ ուսանողի կողմից: Քննաշրջանն անցկացվել է օբյեկտիվ և պատշաճ կազմակերպված, իսկ առարկայական պարտք ունեն հիմնականում հաճախումների առումով ֆակուլտետի անկարգապահ ուսանողները:

Արտահայտվեցին - Պ. Ասիլբեկյանը, Գ. Ավետիսյանը

Նրանք նշեցին, որ որպես կրթական ծրագրերի ղեկավարներ մասնակցել են քննաշրջանին: Այն անցկացվել է օբյեկտիվ և պատշաճ մակարդակով: Ընդհանուր առաջադիմությունը ֆակուլտետում կազմել է 73 % (83% սերվիս, 70% տնտ. տես.): Նրանք առաջարկեցին ֆակուլտետի ըստ մասնագիտությունների 2016-2017 ուս. տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքները համարել բավարար:

Որոշեցին - Ֆակուլտետի ըստ մասնագիտությունների 2016-2017 ուս. տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքները գնահատել բավարար:

2.Լսեցին - Ն. Խուդավերդյանին

Նա նշեց, որ ֆակուլտետում 2016-17 ուս. տարում կազմակերպվել և անց է կացվել ավարտական կուրսերի ամփոփիչ ատեստավորում գործող « Տնտեսագիտության տեսություն » և «Սերվիս» մասնագիտությունների գծով, որն էլ կազմակերպվել է համապատասխանաբար 2017թ. մայիսի 21-ին և 28-ին, 21-ին և 27-ին՝ ՀՀ Կրթության և Գիտության նախարարության բոլոր պահանջներին համապատասխան:

Ամփոփիչ քննությունները և ավարտական աշխատանքների պաշտպանությունները անց են կացվել պատշաճ կազմակերպված՝ համաձայն սահմանված և յուր ժամանակին ներկայացված ժամանակացույցի:

« Տնտեսագիտության տեսություն » մասնագիտության ամփոփիչ քննությանը մասնակցել են թվով 21 շրջանավարտներ: Նրանցից 3-ը՝ գնահատվել են «գերազանց » , 13-ը՝ «լավ», 5-ը՝ «բավարար», «անբավարար» գնահատական չի գրանցվել:

Ավարտական աշխատանքների պաշտպանությանը ևս մասնակցել են 21 շրջանավարտներ, որոնցից 8-ը գնահատվել են «գերազանց», 11-ը՝ «լավ», 2-ը՝ «բավարար», այստեղ ևս «անբավարար» գնահատականներ չեն գրանցվել: Ընդ որում բարձր («լավ» և «գերազանց») գնահատականների արժանացած ուսանողների կողմից ցուցաբերվեց իմացության և պատրաստվածության բավականաչափ բարձր մակարդակ մեկ շրջանավարտ մասնաճյուղի կողմից երաշխավորվել է ուսման վճարի 100% փոխհատուցմամբ ուսումը շարունակելու մագիստարտուրայում (ԵՊՀ համապատասխան ֆակուլտետում):

Իհարկե կային նաև ոչ մեծ թվով ուսանողներ, որոնք աչքի չընկան մասնագիտական բարձր գիտելիքներով և պատրաստվածությամբ:

Ընդհանուր առմամբ « Տնտեսագիտության տեսություն » մասնագիտության ամփոփիչ քննության և ավրտական աշխատանքների պաշտպանության արդյունքները կարելի է համարել բավարար՝ միաժամանակ ներկայացրեց մասնագետ կադրերի պատրաստման որակի հետագա բարելավման ուղղությամբ քննական հանձնաժողովի նկատառումներն ու առաջարկությունները:

Առաջարկություններ

1. Ուսանողների մասնագիտական գիտելիքների մակարդակը էլ ավելի բարձրացնելու նպատակով նրանցից առավելագույնս պահանջել օգտվել, տարբեր դասագրքերից և ժամանակակից տնտեսագիտական պարբերականներից (հոդվածներից) և վերլուծություններից:
2. Ուսանողների մոտ բարձրացնել գործնական հմտություններն ու կարողությունները՝ ՀՀ տնտեսության տարբեր ճյուղերի համար ինքնուրույն վերլուծություններ կատարելու համար:

Ի լրում որի ներկայացնեմ նաև իմ սուբյեկտիվ կարծիքը, այն է որ անհրաժեշտ է առավել մեծ ուշադրություն դարձնել ուսանողների մոտ բանավոր խոսքի (ներկայացման) և ինքնուրույն խնդիր դնելու կարողությունների ձևավորման վրա:

«Սերվիս» մասնագիտության ամփոփիչ քննությանը մասնակցել են թվով 14 շրջանավարտներ: Նրանցից 7-ը գնահատվել են «գերազանց » , 6-ը՝ «լավ», 1-ը՝ «բավարար», արդյունքում «անբավարար» գնահատական չի գրանցվել:

Ավարտական աշխատանքների պաշտպանությանը ևս մասնակցեցին 14 շրջանավարտներ , որոնցից 8-ը գնահատվեցին «գերազանց » , 11-ը «լավ», 2-ը՝ «բավարար»: Ներկայացված ավարտական աշխատանքները հատկապես առանձնացան իրենց վերլուծական և կատարողական բարձր մակարդակով:

«Բարձր» («լավ» և «գերազանց») գնահատականի արժանացած ուսանողները ցուցաբերեցին իմացության և պատրաստվածության բավականին բարձր մակարդակ և նրանց կարելի էր երաշխավորել ուսումը մագիստրատուրայում շարունակելու համար (սակայն ցանկություն հայտնեց միայն մեկ շրջանավարտ):

Չնայած, որ «Սերվիս» մասնագիտության ամփոփիչ ատեստավորման արդյունքները առանձնահատուկ տպավորիչ էին, այնուամենայնիվ ատեստավորման հանձնաժողովը մասնագետների պատրաստման որակի հետագա բարելավման ուղղությամբ ներկայացրեց որոշակի նկատառումներ և առաջարկություններ:

Որպես նկատառում նշվել է, այն որ աշխատանքներն ավելի կշահեին, եթե դրանց ներկայացման ժամանակ առավելապես կիրառվեին տեղեկատվական տեխնոլոգիան:

Իսկ առաջարկները հետևյալն էին՝

1. Մասնագիտական (թողարկող) ամբիոնում քննարկել ավարտական աշխատանքների պատրաստման և ներկայացման ընթացքում տեղեկատվական տեխնոլոգիաների առավել արդյունավետ կիրառման և ինովացիոն մոտեցումների ներդրման հնարավորությունը;
2. Հարցաշարերը կատարելագործել՝ հաշվի առնելով ոլորտը կարգավորող օրենսդրության մեջ նախատեսվող փոփոխությունները;
3. Պահպանել և զարգացնել ավարտական աշխատանքներում վերլուծական և պրակտիկ մոտեցումներ;
4. Առավել մեծ ուշադրություն դարձնել ավարտական աշխատանքների կիրառական կողմին:

Արտահայտվեց - Գ. Հովհաննիսյանը

Նա նշեց, որ որոշ ուսանողների մոտ բացակայում էր վերլուծական բաղադրիչը: Ուսման ընթացքում անհրաժեշտ է շեշտը դնել ուսանողների ինքնուրույն աշխատանքների վրա և հիմք ստեղծել վերլուծական ունակությունները զարգացնելու համար: Անհրաժեշտ է գնահատման մեջ լինել խիստ: Ավարտական աշխատանքների պաշտպանությունը անցկացնել բացառապես շնորհանդեսների միջոցով:

Արտահայտվեց -Ս. Առաքելյանը

Նա նշեց, որ պետք է բարձրացնել կարգապահությունը, խստացնել գնահատումը, ավարտական աշխատանքների պաշտպանությունը անցկացնել բացառապես շնորհանդեսների միջոցով:

Որոշեցին - Ֆակուլտետի ըստ մասնագիտությունների 2016-2017 ուս. տարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքները համարել բավարար և նոր ուսումնական տարում հիմքեր ստեղծել նշված թերությունները վերացնելու ուղղությամբ:

3.Լսեցին ընթացիկ հարցեր

3.1.Լսեցին - ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության հարցման արդյունքների մասին :

/Զեկ Ն. Խուդավերդյան/

Ն. Խուդավերդյանը նշեց, որ յուրաքանչյուր տարի շրջանավարտների շրջանում ամփոփիչ ատեստավորման քննություններից հետո անց է կացվում ԵՊՀ

Իջևանի մասնաճյուղում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության հարցումներ, որոնց արդյունքների վերլուծությունը հնարավորություն է տալիս մեզ վեր հանել մեր ուժեղ և թույլ կողմերը և կատարել համապատասխան քայլեր:

Հարցման արդյունքների վերլուծությունը ցույց են տալիս, որ ընդհանուր առմամբ շրջանավարտների բավարարվածությունը ԲՈՒՀ-ում ձեռք բերված տեսական գիտելիքներից կազմում է 4,76 միավոր (հինգ բալանոց սանդղակով), գործնական հմտություններից՝ 3,85, իսկ մասնագիտական կարողությունների ձեռք բերման ցուցանիշը կազմել է 4,56 միավոր: Ընդհանուր առմամբ այս ցուցանիշները ցածր չեն, սակայն հարցման արդյունքները ցույց են տալիս, որ մեր աշխատանքները պետք է ուղղորդվեն հատկապես գործնական հմտությունների ամրապնդման ուղղությամբ տարվող աշխատանքներին:

Հարցման արդյունքների վերլուծությունը ցույց են տալիս, որ զգալիորեն աճել է ուսանողների պրատիկայից բավարարվածության ցուցանիշը (օրինակ համանման ցուցանիշը «Սերվիս» մասնագիտությունում եղել 4,36 միավոր, իսկ «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտությունում 4,53, 2015-16 ուս. տարում այն համապատասխանաբար կազմել է 4,0 և 3,91):

Ընդհանուր առմամբ ուսանողների բավարարվածությունը գիտելիքների գնահատման օբյեկտիվությունից ֆակուլտետում կազմել է 4,27 միավոր, իսկ ամփոփիչ ատեստավորումից՝ 4,37 միավոր:

Անշեղորեն ավելանում է ուսանողների բավարարվածությունը մասնաճյուղի ուսումնառության ռեսուրսներից (կահավորումից, համացանցի մատչելիությունից):

Բավարարվածության աճ է նկատվել նաև գրադարանի և ընթերցասրահի սպասարկումից:

Ուսանողների բավարարվածությունը մասնաճյուղի և ֆակուլտետի ղեկավարությունից համապատասխանաբար 4,45 և 4,65 է , ինչպես նաև դասախոսական կազմից կազմել է 4,80 միավոր: Այս բարձր միավորները խոսում է այն մասին որ ֆակուլտետի և մասնաճյուղի ղեկավարությունն ամեն ինչ անում են իրենց ուսանողների բարձրորակ կրթությունը կազմակերպելու համար:

Ուրախալի է, որ շրջանավարտները բավարարված են ուսանողների կարիքներին արձագանքելու մասնաճյուղի և ֆակուլտետի ստորաբաժանումների ջանքերից և ուսանողների դիմումներին և բողոքներին արձագանքելու ընթացակարգերի ու մեխանիզմների արդյունավետությունից;

Բավարարվածության համեմատաբար ցածր ցուցանիշներ են արձանագրվել ուսանողական կառույցների աշխատանքից (4,01 միավոր): Եվ սա այն դեպքում, երբ ֆակուլտետում առկա են բոլոր պայմանները, որոնք ուսանողների համար ապահովում են պատշաճ ուսումնական և գիտական միջավայր: Մասնավորապես,

ակտիվ գործում է ֆակուլտետի ուսանողական խորհուրդը՝ ուսանողների համար կազմակերպելով տարբեր գիտամշակութային միջոցառումներ, հանդիպումներ և ճանաչողական այցեր:

ՈՒսանողական գիտական ընկերությունը պարբերաբար կազմակերպում է գիտական զեկուցմների շարք, ապահովում է ֆակուլտետի ուսանողների մասնակցությունը տարբեր ուսանողական գիտաժողովների:

ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթության ընդհանուր գնահատականը կազմել է «Սերվիս» մասնագիտությունը 4,47, իսկ «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտությունում 4,35 միավոր:

Դրական ենք համարում այն փաստը, որ մեր շրջանավարտները այն հարցին, թե խորհուրդ կտաք ձեր մերձավորներին և ընկերներին ընդունվել ԵՊՀ ԻՄ «Սերվիս» մասնագիտությունում կազմել է 85,7% , իսկ «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտությունում՝ 89,5%:

Որոշեցին - ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության հարցման արդյունքների մասին հաղորդումը ընդունել ի գիտություն:

3.2.Լսեցին - 2017 - 18 ուս. տարվա « «Տուրիզմի կառավարման և մշակութաբանության» ամբիոնի աշխատանքային պլանի քննարկման և հաստատման մասին:

/Գ. Հովհաննիսյան/

«Տուրիզմի կառավարման և մշակութաբանության» ամբիոնի վարիչի պաշտոնակատար Գ. Հովհաննիսյանը նշեց, որ քննարկման ներկայացված ամբիոնի աշխատանքային պլանի նախագիծը ներառում է ֆակուլտետի ռազմավարական ծրագրի, դասախոսների անհատական զարգացման պլանների և ամբիոնի գիտակրթական գործունեության բոլոր հիմնական ուղղությունները, ինչը կնպաստի ուսումնական տարվա ընթացքում ամբիոնային աշխատանքների ճիշտ կազմակերպման և ուսման որակի բարձրացման գործին:

«Տուրիզմի կառավարման և մշակութաբանության» ամբիոնի վարիչի պաշտոնակատար Գ. Հովհաննիսյանը ֆակուլտետի գիտական խորհրդի քննարկմանը ներկայացրեց 2017 -2018 ուս. տարվա ամբիոնի աշխատանքային պլանի նախագիծը /նախագիծը կցվում է/:

Արտահայտվեց - գիտական խորհրդի նախագահ Ն. Խուդավերդյանը

Նա հայտնեց, որ կատարված ուսումնասիրության և համեմատական վերլուծության արդյունքում պարզվել է, որ «Տուրիզմի կառավարման և

մշակութաբանության» ամբիոնի աշխատանքային պլանը՝ ըստ թեմատիկ և ժամանակագրական կառուցվածքի, համապատասխանում է ֆակուլտետի խորհրդի աշխատանքային պլանին և հավանություն տալով ներկայացրեց քննարկման ու հաստատման:

Որոշեցին -հաստատել 2017-18 ուս. տարվա «Ընդհանուր տնտեսագիտության» և «Տուրիզմի կառավարման և մշակութաբանության» ամբիոնների աշխատանքային պլանները:

3.3. Լսեցին - Ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների անհատական ծանրաբեռնվածությունների քննարկման և հաստատման մասին:

/Զեկ. Ն. Խուդավերդյան/

Նա նշեց, որ ըստ 2017-2018 ուս. տարվա աշխատանքային ուսումնական պլանով նախատեսված բոլոր առարկանները (դասընթացները) երկու մասնագիտական ամբիոնների կողմից բաշխված են , բաշխվել են նաև ավարտական և կուրսային աշխատանքները, ինչպես նաև արտադրական և ուսումնական պրակտիկաները: Պրոֆեսորադասախոսական անձնակազմի յուրաքանչյուր անդամ տեղեկացվել է 2017-18 ուս. տարվա իր անհատական ծանրաբեռնվածությունը:

Արտահայտվեցին - Պ. Ասիլբեկյանը, Գ. Ավետիսյանը

Նրանք նշեցին որ ֆակուլտետում գործող երկու ամբիոնների դասախոսներին տրամադրվել են իրենց անհատական ծանրաբեռնվածությունը և մինչև օգոստոսի 25-ը պետք է ամբիոններ ներկայացնեն անհատական ծարնաբեռնվածությանը համապատասխան դասընթացների փաթեթները:

Որոշեցին -հաստատել ներկայացված 2017-2018 ուս. տարվա «Ընդհանուր տնտեսագիտության» և «Տուրիզմի կառավարման և մշակութաբանության» ամբիոնների անհատական ծարնաբեռնվածությունները:

1.4. Լսեցին -ֆակուլտետի գիտական խորհրդի կազմում փոփոխություն կատարելու մասին:

/Զեկ Ն. Խուդավերդյան/

Նա նշեց, որ ֆակուլտետի գիտական խորհրդի անդամ չորրորդ կուրսի ուսանողուհի Սվետա Սաֆարյանը ավարտել է ուսումը մասնաճյուղում, այդ իսկ պատճառով ֆակուլտետի գիտական խորհրդի կազմում պետք է կատարել փոփոխություն: Նա առաջարկեց ֆակուլտետի գիտական խորհրդի կազմում ընդգրկել «Սերվիս» մասնագիտության երկրորդ կուսի ուսանողուհի Մարիամ

Մելիքսեթյանին: Ն. Խուդավերդյանը ներկայացրեց ֆակուլտետի գիտական խորհրդի նոր կազմը.

1. Խուդավերդյան Նելլի - խորհրդի նախագահ,
2. Սարիբեկյան Անուշ - խորհրդի քարտուղար,
3. Մարզպանյան Հարություն - Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչ,
4. Հովհաննիսյան Գուրգեն - Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչի ժ/պ,
5. Սիրոյան Գարիկ - Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի ասիստենտ,
6. Ավետիսյան Գայանե - Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի ասիստենտ, «Տնտեսագիտութուն » մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատու
7. Պոտոսյան Ակսել - Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի դոցենտ,
8. Ազիզյան Հռիփսիմե - Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի ասիստենտ,
9. Ասիլբեկյան Պավել - Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի ասիստենտ, «Սերվիս» մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատու, ֆակուլտետի արհեստակցական միության նախագահ,
10. Սարուխանյան Մուշեղ - ՀՈՒԲ վարիչի տեղակալ,
11. Առաքելյան Վահագն - Իջևանի տարածաշրջանային քոլեջի տնօրեն,
12. Մելիքջանյան Լյովա - ԱՇԻԲ «Իջևանի մասնաճյուղ» ՓԲԸ կառավարիչ,
13. Ղահրամանյան Հովհաննես - Տավուշի մարզի տուրիզմի զարգացման գործակալության տնօրեն,
14. Քարտաշյան Հասմիկ - ֆակուլտետի ՈՒԽ նախագահ,
15. Հակոբյան Սոնա - ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահ,
16. Մելիքսեթյան Մարիամ - «Սերվիս» մասնագիտության II կուրսի ուսանողուհի,
17. Մխիթարյան Նարինե - «Սերվիս» մասնագիտության III կուրսի ուսանողուհի:

Որոշեցին - հաստատել ֆակուլտետի գիտական խորհրդի նոր կազմը:

Գիտխորհրդի նախագահ ***Ն. Խուդավերդյան***

Քարտուղար ***Ա. Սարիբեկյան***